79. ՊԸԼԼ ՂԱՐԱԴԱՂՅՈՒՑ ՀԱՔՅԱԹԸ

[Տերտերին ծեծելը]

Իլա՛լ ա՝ չիլա՛լ մին տերտեր, մին էլ մին քանի մարթիքյ, վըեր ծիյանք ըն եր իլա՛լ քյինացալ ման եկալ։ Մեչներումը մին ծի ա իլա՛լ, ըստրա էլ մին քոռակ։ Ըստահանց ծիյանքը մնացալ ըն, ամմա էս քոռակս արխավը տես ա իլա՛լ լոք տամ, տեն։ Ասալ ըն, թա. «էս հո՞ւնց անենքյ, վըեր էս քոռակս մնա»։ Թա. «Պիրեք լոխ շորրընես հանենքյ, տանք յրան, վըեր արխումը մնա»։ Լոխ շորրընեն հանալ ըն, տկլորացալ, տվալ յրան։ Էս տերտերս ուրան փոխանը հանալ չի։ Էս քոռակին ըրալ ըն արխին կոշտը, թակալ, թա. «Հունցու վըեր օղի, թա անց կենա, մնա արխին մեչումը»։ Քոռակը ըրդան լոք ա տվալ, անց կացալ էն ղոլը։ Փոնալ ըն էս տերտերին թակալ, թա. «Խե՞ փոխանտ հանալ չըս, վըեր ծանդրոթուն անի, կարա ոչ անց կենա»։

Աստվածանից իրեք խնձոր վեր ինգյնի.. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չիլսողին։